«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում»

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ Թալինի թիվ 1 հիմն. դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... էջ 3

2. ԳԼՈՒԽ 1. «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզվի դասավանդման ընթացքում» ..... էջ 6

3. ԳԼՈՒԽ 2. «Էպոսի գաղափարական հենքի սերմանումը հայոց լեզվի և հայագիտական առարկաների դասընթացում» ..... էջ 10

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... էջ 14

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... էջ 15

6. ՀԱՎԵԼՎԱԾ ..... էջ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը՝ Այսօրվա յուրաքանչյուր աշակերտի մեջ արժեք և արժանապատվություն սերմանելու համար ուսուցչից պահանջվում է գերբնական ուժ, իսկ այդ ուժը ձեռք է բերվում նորամուծությունների միջոցով:

Բայց որպեսզի «արժեքը» հասու լինի բոլորին, պետք է նախ բացատրել՝ ինչ է «արժեքը»: Արժեքը=արժեբանության, որը հանդիսանում է փիլիսոփայական եզրույթ: «Աքսիոլոգիա» եզրույթը հունարենից թարգմանաբար նշանակում է ուսմունք արժեքների մասին (հունարեն axia - արժեք և logos - ուսմունք) արժեքների մասին գիտություն: Արժեքը բնորոշվում է որպես «շրջապատող աշխարհի օբյեկտներին հատուկ սոցիալական որակումներ, որոնք բացահայտում են նրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար»:

Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Ըստ Լիդա Թորգոմյանի, «արժեք»-ը ունի իր մի քանի կարևոր նշանակությունները՝

Արժեքի նշանակությունները

- ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
- ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ՈՐԱԿՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը: Միասնական էր նաև արժեհամակարգը: Մեզ մնում էր միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները:

Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն:

Այսօր, համաձայն ՀՀ-ի կրթական չափորոշիչների, արժեքային համակարգը նախատեսում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր շրջանավարտ պետք է ունենա հետևյալ սկզբունքները.

• Հայրենասիրություն,

• Պատրաստակամ լինի պաշտպանելու հայրենիքի սահմանները,

•Ակտիվ մասնակցություն ունենա ազգային հիմնախնդիրների լուծման գործընթացներին,

• Արժևորի սեփական ժողովրդի նյութական և հոգևոր արժեքների կարևորությունը,

• Կարևորի իր անձի՝ազգային արժեհամակարգի մի մասնիկ լինելու հանգամանքը:

• Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներ են հանդիսանալու ձեռք բերած գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:

Քանի որ արժեքը և արժեհամակարգը բխում են անմիջապես մարդու պահանջ-մունքներից, ապա կարելի է կազմել մարդու ամենակարևոր հոգևոր պահանջմունքների բուրգը:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրե-նասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հումանիտար առարկաների, մասնավորապես լեզվի, գրականության և պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում:

Հետազոտության նպատակը՝

- Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակր-թական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ ***խնդիրները՝***

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Հետազոտության օբյեկտը. հետազոտության օբյեկտ է հանդիսանում դասարանը, որտեղ կատարել եմ դասապրոցես:

Հետազոտության առարկան. հայրենասիրական դաստիարակության դերը հայոց լեզվի ուսուցման գործընթացում՝ որպես արժեհամակարգի ձևավորման կարևոր բաղադրիչ:

Հետազոտության մեթոդները. հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, հայ գիտական գրականության ուսումնասիրում և վերլուծության, դիտում, զրույց էպոսի պատմական հիմքի մասին:

ԳԼՈՒԽ 1. «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզվի դասավանդման ընթացքում»

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընկալվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքային համակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի, գրականության՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի եւ օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առընչությամբ և պատմություն առարկայի դերը:

Արժեքային համակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության,

նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների եւ կարողությունների:

ժամանակակից մանկավարժության համար, հատկապես երկրի նման դժվարին ու բարդ օրերում, գլխավոր խնդիր է դարձել սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Ինչպես մանկավարժական գործունեությանս ընթացքում փորձն է ցույց տվել կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»[3]:

Ուսուցիչը առանձնացնում է որոշակի դաստիարակչական բնույթի խնդիրներ, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,

էքսկուրսիա, դասղեկի ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադիր լինել միմյանց նկատմամբ, համատեղ ջանքերով հաղթահարել առաջադրված դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր խմբի կարծիքները, ընդօրինակել միմյանց և այլն:

Ըստ իս, ուսուցչի գերագույն նպատակը բոլոր դասերի ընթացքում պետք է լինի՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով:

- Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները
- Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:
- Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:
- Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:
- Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:
- Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

- Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:
- Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:
- Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

Սովորողի հենց այս դրսևորման ընթացքում է, որ պետք է մանկավարժը իր տարիների ամբարած գիտելիքն ու փորձը համախմբի և լծվի սովորողների ազգային գիտակցության ձևավորման գործընթացին:

Ինչպես գիտենք, ազգային-էթնիկ հայրենասիրությունը հիմնված է իր էթնո-ազգային մշակույթի վրա, այսինքն. պահում է հոգևոր բովանդակություն էթնիկ և սոցիալական ձևեր... Այն պետք է արթնացնի հայրենիքի հանդեպ սիրո զգացում իր էթնիկ ձևով, ազգային հպարտություն, նպաստի ազգային զգացմունքների և ազգային բնավորության, ավանդույթների զարգացմանը, սոցիալական կյանքի էթնոմշակութային ձևերի ստեղծման համար բարոյական բարձր պատասխանատվության զգացում ձևավորի:

Մեծ է հայկական էպոսի դերը սովորողների մեջ հայկական արիության ու մարտական ոգին սնելու համար:

Էպոսը մեր գրականության այն բացառիկ գոհարն է, որն ի զորու է նոր կյանք մուտք գործող սերնդի գիտակցության մեջ ամրապնդել ազգային ինքնագիտակցություն ու հայրենասիրություն, ցույց տալ հայի ոգին, հողը, ջուրը, այն ամենը, ինչը հային պահում է հայ:

ԳԼՈՒԽ 2. «Էպոսի գաղափարական հենքի սերմանումը հայոց լեզվի և հայագիտական առարկաների դասընթացում»

«Անկարելի է գտնել աշխարհ մը և ազգ մը,

որ համեմատվի հայուն և յուր երկրին,

որ այնքան ավեր, մահ, սուր, ուրացություն,

արյուն, գերություն

կրած լինի, ու նորեն ցայսօր ապրի»

Գ.Սրվանձտյանց

Էպոսի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, որն իր գեղարվեստական մարմնավորումն է գտել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում: Սասնա դյուցազունները, իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ, միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ:

Մեր ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք հնացող չէ, որովհետև այն մարդուց պահանջում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալ ուժին, ունենալ անկախ հայրենիք և ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

Նման վեհ գաղափարախոսությունը պետք է սովորողի մոտ արժեհամակարգի բաղկացուցիչ մասը կազմի:

Մեր ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք հնացող չէ, որովհետև այն մարդուց պահանջում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալ ուժին, ունենալ անկախ հայրենիք և ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

Հայոց լեզվի և հատկապես հայագիտական առարկաների դասապրոցեսում անցնելով էպոսի թեման, խոսելով հայի անպարտ ոգու, վեհ ու խաղաղասեր տեսակի մասին,

դարեր ի վեր տարած հաղթանակների ու կորուստների մասին, մայր հողի հանդեպ սիրո մասին, վստահ կարող եմ փաստել, որ մանուկների աչքերում ամեն բառից, ամեն խոսքից հետո վառվում է հայրենիքի հանդեպ սիրո անասելի գիտակցում:

Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր չխնայելով, անգամ գեթ մեկ վայրկյան չմտածելով, զոհել իր կյանքը:

Մեր հայկական էպոսը բացառիկ է իր ժանրով, քանի որ այն ոչ միայն հայ ժողովրդի ազատության դյուցազնական ձայնն է, այլև երբեք չլռող սթափեցման կոչ՝ ուղղված աշխարհի ժողովուրդներին, որոնք իրականում կարող են ապրել խաղաղության ու փոխըմբռնման մթնոլորտում:

Որքա՜ն մարգարեական են հնչում իսկական հայրենասերի տագնապները: Նա զգում էր ցեղասպանության՝ դամոկլյան սրի կախված լինելը հայ ժողովրդի արևմտահայ հատվածի գլխին և իր անմնացորդ բանահավաքչական ու բանագիտական եռանդով փրկում էր բանահյուսական գանձերը՝ ի պահ տալով ապագա սերունդներին: Եվ դրանց մեջ էր հայ բանահյուսության մեծագույն գանձը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը:

Հայ ժողովրդական հերոսական էպոսի գլխավոր դեմքը Սասունցի Դավիթն է, որն անսահման ուժի տեր է, և ըստ էպոսի՝ նրա նետած գուրզը դեռ շարունակում է թռչել տիեզերքում: Էպոսի դյուցազունների համար կարևոր է քրիստոնեական երդումը՝ «Հացն ու գինին, տերն կենդանի»: Հացը Հիսուս Քրիստոսի մարմինն է, իսկ գինին՝ նրա արյունը. էպոսում կա նաև հավատը, թե Հիսուսը հավերժ կենդանի է:

Ինձ՝ որպես մանկավարժ, հետաքրքրում են Սասունցի Դավթի՝ ազգային սիրված հերոսի բնավորության հիմնական գծերը՝ քաջություն, հայրենասիրություն, նվիրում իր ժողովրդին, հոգատարություն դեպի աշխատավոր մարդը, վեհանձնություն և մեծահոգություն, որպեսի սերմանեմ իմ աշակերտների մեջ:

Ժողովրդական էպոսներն ամեն մի ազգի հայրենասիրական խոր զգացման հավաքական դրսևորումն են: Այդ վկայում են տարբեր ժողովուրդների էպոսներին տրված նշանավոր մտավորականների գնահատականները:

Էպոսի դյուցազունները խալիֆի զավակները չեն, նրանք ջրածին են, ավելին՝ ջուրը Հայաստանինն է: Սա շատ կարևոր դրվագ է: Ընդհանրապես հայրենիքը, հայրենի եզերքը խորհրդանշում են հողը, ջուրը, մարդու հարազատները: Ահա այս գաղափարախոսությունն է կարևոր սերմանել ուսումնական գործընթացում:

Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում որևէ ժողովրդի՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմը:

Քրիստոնեական կրոնի ցայտուն դրսևորում է նաև Սասնա դյուցազունների թևի վրայի եղած խաչը, որը, նայած հանգամանքների, գունափոխվում է: Սա ևս պետք է կարևորվի՝ որպես հոգևոր դաստիարակության հիմք սովորողների արժեհամակարգում:

Քրիստոնեական հավատալիքները երևում են նաև էպոսի «Վերջերգում»՝ կապված քրիստոնեական հավատքի երկու կարևոր տոների՝ Վարդավառի և Համբարձման հետ: Արդի հայկական դպրոցներում անցնում են հայոց եկեղեցու պատմություն, իսկ լեզվի /հայոց և օտար/ ուսուցիչները պարտավոր են օգտագործել այս հարմար առիթը՝ միջառարկայական կապերը ամրացնելու համար:

«Սասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ: Ուսուցիչը պարտավոր է այնպես ներկայացնել էպոսի գլխավոր կերպարներին, որ նրանք ազդեն աշակերտի սրտի ու մտքի վրա:

Խորհուրդ է տրվում գեղարվեստական բնագիրը կարդալ դանդաղ և ներթափանցել նրա իմաստային խորքերը, որովհետև կենտրոնացած և ուշադիր ընթերցումը երևան է հանում բնագրի դժվար հատվածները և անհասկանալի մասերը դարձնում է հասկանալի:

Այս դրույթը շատ կարևոր է ուսուցչի համար: Նա վերցնում է էպոսի որևէ կարևոր հատված, դանդաղ կարդում դասարանում և առաջարկում աշակերտներին բացատրել, թե ինչպես են հասկանում նրանք այդ հատվածը: Ուսուցիչն ուշադրություն է հրավիրում

այն փաստի վրա, որ Մհերին հետաքրքրելու է ոչ միայն իր երկրի, այլև հանուր մարդկության ճակատագիրը: Նա դառնալու է մարդկության չար ուժերի դեմ կռվող խիզախ մարտիկը: Սասունցի Դավթի կերպարը ամենագլխավորն է. այդ կերպարում առկա են հայ ժողովրդի ազգային բնավորության լավագույն գծերը: Հեգելը խոսել է Հոմերոսի «Իլիականի» կերպարների մասին և խիստ դիպուկ բնութագրել հունական էպոսի գլխավոր հերոսին՝ Աքիլլեսին. «Հոմերոսի մոտ. օրինակ, ամեն հերոս իրենից ներկայացնում է մարդկային գծերի և հատկությունների կենդանի ամբողջություն: Աքիլլեսն ամենաերիտասարդ հերոսն է, բայց նրա պատանեկան ուժին հատուկ են, հիրավի, ուրիշ մարդկային գծեր, և Հոմերոսը մեր առաջ բացում է նրա բնավորության գծերի բազմազանությունը՝ նրան դնելով ամենատարբեր իրավիճակներում» :

Հեգելյան դրույթից ելնելով՝ կարող ենք ասել, որ հայ ժողովրդական էպոսում էլ հավաքական ժողովուրդն իր սիրելի հերոսին՝ Դավթին, դնում է ամենատարբեր կենսական իրավիճակներում և կերտում, հիրավի, անմոռաց կերպար: Ուսուցիչն ուրույն ձևով պետք է սերմանի Մեծն Դավթի մեծահոգությունն ու վեհանձնությունը իր սաների սրտերում:

Էպոսի արվեստի ցուցիչներից է նաև կերպարների բազմազանությունն ու նրանց իրական և անմոռաց անհատականություններ լինելը: Երկու հիմնական հակառակորդներն են Փոքր Մսրա Մելիքը և Սասունցի Դավիթը, որոնք Մեծ Մհերի որդիներն են: Վենի դիագրամի միջոցով ուսուցիչը ներկայացնում է այդ երկու կերպարների նմանություններն ու տարբերությունները: Նրանք նման են իրենց հսկա ուժով, պարզապես շատ տարբեր են մարդկային առաքինություններով: Մսրա Մելիքը Սասունցի Դավթի հակապատկերն է իր դաժանությամբ, նենգությամբ ու չարությամբ: Ողջ երրորդ ճյուղը հարուստ է Մելիքի ստոր արարքների նկարագրությամբ: Մելիքը նույնիսկ զորահավաքի հրամանը գրում է ոչ թե մելանով, այլ սեփական արյունով:

Ուսուցանողը գլխավոր հերոսների խիստ հակադրման սկզբունքի համար օգտագործում է Վենի դիագրամը, որի միջոցով հենց աշակերտը կարող է առանձնացնել Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի բնավորության հակառակ գծերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եթե փորձենք ի մի բերել մեր կողմից առաջադրված և՛ նպատակները, և՛ խնդիրները, ապա պետք է հասկանանք, որ հատկապես այսօր շատ կարևոր է ուսումնասիրել և փորձել, հասու դարձնել արժեհամակարգը ապագա սերունդներին, գիտենալով, որ արժեհամակարգի բուրգի մեծագույն արժեքին՝ հայրենասիրությանը հասնելու համար, մեզ որպես օրինակ ծառայում են ինչպես համաշխարհային, այնպես էլ հայոց պատմության ամեն մի դրվագ, ամեն մի պատմական հերոս կամ ամեն մի զինվոր:

1 Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ՝ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը:

2 Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

3 Էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը:

4 «Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում և բուհերում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ: Ելնելով վերոհիշյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լ.Թորգոմյան- Մանկավարժության արժեքաբանության հիմունքներ:
2. https://hy.wikipedia.org/wiki
3. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.
4. Н.М.Шанский, Ш.А.Мамедов, Филологический анализ художественного текста, Москва, 2010, с. 7-8.
5. Н. И. Кравцов, С. Г. Лазутин, Русское устное народное творчество, Москва, 1983, с. 7-8

ՀԱՎԵԼՎԱԾ



Ա
պատում

Սասունցի Դավիթ
կամ
Մհերի դուռ

պատմեց
Տարոնցի Կրպոն

գրի առավ 1873 թ
Գարեգին Սրվանձտյան